

ՅԱԿՈԲՈՍԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

ՅԱԿՈԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

1

Յակոբոս, Աստուծոյ ու Տէր Յիսուս Զրիստոսի «ծառայ, տասներկու տոհմերուն՝ որ ցրուած են **ամէն կողմ**. ողջո՛յն:

ՀԱԻԱՏՔ ԵՒ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

2 Եղբայրներս, բոլորովին ուրախութի՛ւն համարեցէք՝ երբ զանազան փորձութիւններու մէջ իյնաք, 3 գիտնալով թէ ձեր հաւատքին փորձը համբերութիւն կ'իրագործէ: 4 Բայց համբերութիւնը թող ունենայ **իր** կատարեալ գործը, որպէսզի կատարեալ եւ ամբողջ ըլլաք, եւ ոչինչ պակսի ձեզի:

5 Իսկ եթէ իմաստութիւն կը պակսի ձեզմէ մէկուն, թող խնդրէ Աստուծմէ՝ որ բոլորին կու տայ առատապէս՝ առանց կշտամբելու, եւ պիտի տրուի անոր: 6 Բայց հաւատքո՛վ թող խնդրէ, առանց տատամսելու. որովհետեւ ա՛ն որ կը տատամսի՝ նման է ծովուն հողմակոծեալ ու տատանեալ ալիքներուն: 7 Այդ մարդը թող չկարծէ թէ որեւէ բան պիտի ստանայ Տէրոջմէն. 8 երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր ճամբաներուն մէջ:

ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ

9 Նուաստ եղբայրը թող պարծենայ իր բարձրացումով, 10 իսկ հարուստը՝ իր նուաստացումով, որովհետեւ ինք պիտի անցնի խոտի ծաղիկին պէս. 11 քանի որ արեւը կը ծագի **այրող** տաքութեամբ ու կը չորցնէ խոտը, անոր ծաղիկը կը թափի, եւ անոր տեսքին վայելչութիւնն ալ կը կորսուի: Այդպէս ալ հարուստը պիտի թառամի իր ճամբաներուն մէջ:

ՓՈՐՉ ԵՒ ՓՈՐՉՈՒԻԼ

12 Երանի՛ այն մարդուն՝ որ կը տոկայ փորձութեան. որովհետեւ երբ փորձարկուի **եւ ընտիր գտնուի՝** պիտի ստանայ կեանքի պսակը, որ Տէրը խոստացաւ զինք սիրողներուն: 13 Ո՛չ մէկը թող ըսէ՝ երբ կը փորձուի. «Աստուծմէ՛ կը փորձուիմ». որովհետեւ Աստուած չարէն չի փորձուիր, ո՛չ ալ ի՛նք կը փորձէ ոեւէ մէկը: 14 Սակայն իւրաքանչիւրը կը փորձուի՝ հրապուրուած ու խաբուած իր ցանկութենէն. 15 Յետոյ՝ ցանկութիւնը յղանալով մեղք կը ծնանի, իսկ երբ մեղքը կատարուի՝ մահ կը ծնանի: 16 Մի՛ մոլորիք, սիրելի՛ եղբայրներս. 17 ամէն բարի նուէր եւ ամէն կատարեալ պարգեւ՝ վերէն է, ու կ'իջնէ լոյսի Հօրմէն, որուն մէջ բնա՛ւ փոփոխութիւն չկայ, ո՛չ ալ դառնալու շուք: 18 Ան ի՛ր փափաքով ծնաւ մեզ՝ ճշմարտութեան խօսքով, որպէսզի մենք երախայրիք մը ըլլանք իր արարածներուն:

ԼՍԵԼ ԵՒ ԿԱՏԱՐԵԼ

19 Հետեւաբար, սիրելի՛ եղբայրներս, ամէն մարդ թող արագ ըլլայ՝ լսելու մէջ, դանդաղ՝ խօսելու մէջ, դանդաղ՝ բարկանալու մէջ. 20 որովհետեւ մարդուն բարկութիւնը չ'իրագործեր Աստուծոյ արդարութիւնը:

21 Ուստի, թօթափելով ամէն աղտեղութիւն ու չարամտութեան անելցուք, հեզութեամբ

<sup>u</sup> Կամ՝ ստրուկ

ընդունեցէք **ձեր** մէջ տնկուած խօսքը, որ կարող է փրկել ձեր անձերը:

**22** Սակայն խօսքը գործադրողներ՝ եղէք, եւ ո՛չ թէ միայն լսողներ՝ դուք ձեզ խաբելով:

**23** Արդարեւ, եթէ մէկը միայն լսէ խօսքը ու չգործադրէ, կը նմանի մարդու մը՝ որ հայելիի մէջ կը դիտէ իր բնական երեսը, **24** որովհետեւ կը դիտէ ինքզինք ու կ'երթայ, եւ իսկոյն կը մոռնայ թէ ի՞նչպէս էր: **25** Բայց ան որ ակնկառոյց կը նայի ազատութեան կատարեալ Օրէնքին ու կը կենայ **անոր մէջ**,– ո՛չ թէ մոռացկոտ լսող մը ըլլալով, հապա՛ գործը կատարող մը,– երանելի պիտի ըլլայ իր ըրածին մէջ: **26** Եթէ <sup>բ</sup>մէկը կը կարծէ կրօնասէր ըլլալ ու չի սանձեր իր լեզուն, այլ կը խաբէ իր սիրտը, անոր կրօնասիրութիւնը փուճ է: **27** Աստուծոյ եւ Հօրը առջեւ՝ մաքուր ու անարատ կրօնասիրութիւնը սա՛ է.– այցելել որբերուն եւ այրիներուն՝ իրենց տառապանքին մէջ, ու ինքզինք անբիծ պահել աշխարհէն:

ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՆԱԽԱՊԱՇԱՐՈՒՄԷ

2

Եղբայրներս, առանց աչառութեան թող ըլլայ մեր Տէրոջ՝ Յիսուս Զրիստոսի՝ փառքի **Տէրոջ** հաւատքը: **2** Արդարեւ եթէ ձեր ժողովարանին մէջ մտնէ մարդ մը՝ ոսկիէ մատանիով ու փայլուն տարագով, եւ մտնէ նաեւ աղքատ մը՝ աղտոտ տարագով, **3** ու նայիք անոր՝ որ փայլուն տարագ կը կրէ, եւ ըսէք. «Հո՛ւ նստէ՛ պատիւով», իսկ աղքատին ըսէք. «Հո՛ն ոտքի կայնէ, կամ հո՛ւ նստէ՛ պատուանդանիս քով», **4** միթէ ձեր մէջ խտրութիւն դրած չէ՞ք ըլլար, ու չար մտածումներու դատաւոր եղած: **5** Լսեցէ՛ք, սիրելի՛ եղբայրներս. միթէ Աստուած չընտրե՞ց **այս** աշխարհի աղքատները՝ **որոնք** հարուստ **եւ** հաւատքով, ու ժառանգորդ արքայութեան՝ որ խոստացաւ զինք սիրողներուն: **6** Բայց դուք անպատուեցիք աղքատները: Հարուստները չե՞ն՝ որ կը հարստահարեն ձեզ ու դատարանները կը քաշեն: **7** Անոնք չե՞ն որ կը հայհոյեն այն բարի անունը՝ որով կոչուած էք: **8** **Ուրեմն՝** եթէ դուք կը գործադրէք արքայական Օրէնքը՝ Գիրքին **ըսածին** համաձայն. «Սիրէ՛ ընկերդ՝ քու անձիդ՝ պէս», լա՛ւ կ'ընէք: **9** Բայց եթէ աչառութիւն կ'ընէք՝ մե՛ղք կը գործէք, եւ կը կշտամբուիք Օրէնքէն՝ օրինազանցներու պէս. **10** քանի որ ո՛վ որ պահէ ամբողջ Օրէնքը սակայն սայթաքի մէ՛կ **բանի** մէջ, պարտապան կ'ըլլայ բոլորին: **11** Արդարեւ ան որ ըսաւ. «Ծնութիւն մի՛ ըներ», ըսաւ նաեւ. «Մի՛ սպաններ»: Ուստի եթէ շնութիւն չընես բայց սպաննես, օրինազանց կ'ըլլաս: **12** Ա՛յնպէս խօսեցէք եւ ա՛յնպէս գործեցէք՝ որպէս թէ պիտի դատուիք ազատութեան Օրէնքով: **13** Որովհետեւ դատաստանը անողորմ պիտի ըլլայ անոր՝ որ չէ ողորմած. սակայն ողորմութիւնը կը պարծենայ դատաստանին դիմաց:

ՀԱԻԱՏՔ ԵՒ ԳՈՐԾԵՐ

**14** Ի՞նչ օգուտ ունի, եղբայրներս, եթէ մէկը ըսէ թէ հաւատք ունի սակայն գործեր չունենայ. միթէ հաւատքը կրնա՞յ փրկել զինք: **15** Եթէ եղբայր մը կամ քոյր մը մերկ ըլլայ եւ օրուան կերակուրին կարօտ, **16** ու ձեզմէ մէկը ըսէ անոնց. «Գացէ՛ք խաղաղութեամբ, տաքցէ՛ք եւ կշտացէ՛ք», բայց մարմինին հարկաւոր բաները չտայ անոնց, ի՞նչ օգուտ ունի: **17** Ա՛յդպէս ալ հաւատքը՝ եթէ գործեր չունենայ **իրեն հետ**՝ մեռած է ինքնիր մէջ: **18** Նոյնիսկ մէկը կրնայ ըսել. «Դուն հաւա՛տք ունիս, ես ալ գործե՛ր ունիմ. ցո՛յց տուր ինձի քու հաւատքդ՝ առանց գործերու, իսկ ես ցոյց պիտի տամ քեզի իմ հաւատքս՝ գործերով»: □

<sup>բ</sup> Ոմանք՝ ձեզմէ մէկը  
<sup>ւ</sup> Յուն.՝ քեզի

19 Դուն կը հաւատաս թէ Աստուած մէկ է. լա՛ւ կ'ընես: Դեւերն ալ կը հաւատան ու կը սարսռան: 20 Բայց կ'ուզե՞ս գիտնալ, ո՛վ սնոտի մարդ, թէ հաւատքը մեռած է առանց գործերու: 21 Աբրահամ՝ մեր հայրը՝ գործերով չարդարացա՞ւ, երբ իր որդին՝ Իսահակը մատուցանեց զոհասեղանին վրայ: 22 Կը տեսնե՞ս թէ հաւատքը գործակից եղաւ անոր գործերուն, ու գործերով հաւատքը կատարեալ եղաւ, 23 եւ իրագործուեցաւ Գիրքին խօսքը՝ որ կ'ըսէ. «Աբրահամ հաւատաց Աստուծոյ, ու ատիկա արդարութիւն սեպուեցաւ անոր, եւ ինք Աստուծոյ բարեկամ կոչուեցաւ»: 24 Կը նկատե՞ք թէ մարդ կ'արդարանայ գործերով, ու ո՛չ թէ՛ միայն հաւատքով: 25 Նմանապէս Ռախաբ պոռնիկն ալ չարդարացա՞ւ գործերով, երբ ընդունեց պատգամաւորները եւ ուրիշ ճամբայով ուղարկեց զանոնք: 26 Արդարեւ ինչպէս մարմինը մեռած է առանց հոգիի, այդպէս ալ հաւատքը մեռած է առանց գործերու:

ՍԱՆՁ ԼԵԶՈՒԻՆ

3

Եղբայրներս, **ձեր մէջ** շատ վարդապետներ թող չըլլան, գիտնալով թէ աւելի «խստութեամբ պիտի դատուինք»: 2 Որովհետեւ բոլորս ալ կը սայթաքինք շատ բաներու մէջ. եթէ մէկը չի սայթաքիր խօսքով՝ կատարեալ մարդ է, կարող՝ սանձելու նաեւ ամբողջ մարմինը: 3 Ահա՛ ձիերուն բերանը սանձ կը դնենք՝ որպէսզի հնազանդին մեզի, եւ կը կառավարենք անոնց ամբողջ մարմինը: 4 Ահա՛ նաւերն ալ, որ ա՛յդչափ մեծ են ու կը քշուին սաստիկ հովերէն, կը կառավարուին ամենափոքր ղեկով մը՝ ի՛նչպէս նաւաւորները փափաքի: 5 Այդպէս ալ լեզուն պզտիկ անդամ մըն է, բայց կը պարծենայ մեծ բաներով: Ահա՛ ո՛րչափ նիւթ կը վառուի քիչ մը կրակով: 6 Լեզո՛ւն ալ կրակ մըն է, անհրաւութեան աշխարհ մը: Լեզուն ա՛յնպէս դրուած է մեր անդամներուն մէջ, որ կ'ապականէ ամբողջ մարմինը ու կը բռնկեցնէ բնութեան շրջանը, իսկ ինք կը բռնկի գեհեհէն: 7 <sup>բ</sup>Գազաններու, թռչուններու, սողուններու եւ ծովային **արարածներու** ամէն բնութիւն՝ կը նուաճուի ու նուաճուած է մարդկային բնութենէն: 8 Բայց ո՛չ մէկը կրնայ նուաճել լեզուն. ան անզուսպ չար է, լի մահաբեր թոյնով: 9 Անո՛վ կ'օրհնաբանենք Աստուած ու Հայրը, եւ անո՛վ կ'անհիծենք մարդիկ՝ որ ստեղծուած են Աստուծոյ նմանութեամբ: 10 Միեւնոյն բերանէն կ'ելլեն օրհնաբանութիւն եւ անէծք: Եղբայրներս, պէտք չէ որ այս ա՛յսպէս ըլլայ: 11 Միթէ աղբիւր մը միեւնոյն ակէն կը բխեցնե՞՞ անոյշ ու դառն **ջուր**: 12 Եղբայրներս, թզենին կրնա՞յ ձիթապտուղ տալ, կամ որթատունկը՝ թուզ: Նմանապէս՝ ո՛չ մէկ աղբիւր կրնայ տալ թէ՛ աղի, թէ՛ անոյշ ջուր:

ՎԵՐԻՆ ԻՄԱՍՏՈՒԹԻՒՆԸ

13 Ո՛վ որ իմաստուն ու խելացի է ձեր մէջ, բարի վարքով թող ցոյց տայ իր գործերը՝ իմաստութեան հեզութեամբ: 14 Բայց եթէ դառն նախանձ եւ հակառակութիւն ունենաք ձեր սիրտերուն մէջ, ճշմարտութեան դէմ մի՛ պարծենաք ու մի՛ ստէք: 15 Այս իմաստութիւնը չ'իջներ վերէն, հապա՛ երկրային, շնչաւոր եւ դիւական է: 16 Որովհետեւ ո՛ւր կայ նախանձ ու հակառակութիւն, հո՛ն կայ խառնակութիւն եւ ամէն տեսակ չար բան: 17 Բայց վերէն եղող իմաստութիւնը՝ նախ <sup>գ</sup>անկեղծ է, յետոյ՝ խաղաղարար, ազնիւ, հլու, լի ողորմութեամբ

<sup>ա</sup> Յուն.՝ մեծ դատաստան պիտի ստանանք

<sup>բ</sup> Կամ՝ Անասուններու

<sup>գ</sup> Յուն.՝ մաքուր շարժառիթով

ու բարի պտուղներով, անկողմնակալ եւ անկեղծ: **18** Արդարութեան պտուղը խաղաղութեամբ կը սերմանուի անոնց միջոցով՝ որ խաղաղութիւն կ'ընեն:

ԱՇԽԱՐՀԻՆ շԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

4

Ուրկէ՞ կը ծագին պատերազմներն ու կռիւները ձեր մէջ: Միթէ չե՞նք ծագիր ձեր կիրքերէն, որոնք կը մարտնչին ձեր անդամներուն մէջ: **2** Կը ցանկաք, բայց չունիք. կը սպաննէք ու կը նախանձիք, սակայն չէք կրնար հասնիլ ձեր ուզածին: Կը կռուիք եւ կը պատերազմիք, բայց չունիք՝ որովհետեւ չէք խնդրեր: **3** Կը խնդրէք՝ սակայն չէք ստանար, որովհետեւ կը խնդրէք չարամտօրէն՝ որպէսզի վատնէք ձեր կիրքերուն համար: **4** Շնացողներ, չէ՞ք գիտեր թէ այս աշխարհի բարեկամութիւնը՝ Աստուծոյ դէմ թշնամութիւն է. ուրեմն ո՛վ որ կը փափաքի բարեկամ ըլլալ աշխարհի, ինքզինք թշնամի կ'ընէ Աստուծոյ: **5** Կամ կը կարծէք թէ Գիրքը ընդունա՞յն Բ'կ'ըսէ. «Նախանձի կը տենչայ մեր մէջ բնակող հոգին»<sup>ա</sup>: **6** Սակայն աւելի մեծ շնորհք մը կու տայ, ուստի կ'ըսէ. «Աստուած կ'ընդդիմանայ ամբարտաւաններուն, բայց շնորհք կու տայ խոնարհներուն»: **7** Ուրեմն հպատակեցէ՛ք Աստուծոյ: Դիմադրեցէ՛ք Չարախօսին, եւ ան պիտի փախչի ձեզմէ: **8** Մօտեցէ՛ք Աստուծոյ, եւ ան պիտի մօտենայ ձեզի: Մաքրեցէ՛ք ձեր ձեռքերը, մեղաւորներ, ու սրբացուցէ՛ք ձեր սիրտերը, երկմիտներ: **9** Զգացէ՛ք ձեր թշուառութիւնը, սգացէ՛ք եւ լացէ՛ք. ձեր խնդուքը թող փոխուի սուգի, ու ձեր ուրախութիւնը՝ տրտմութեան: **10** Խոնարհեցէ՛ք Տէրոջ առջեւ, եւ ան պիտի բարձրացնէ ձեզ:

ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ԵՂԲԱՅՐԸ ԴԱՏԵԼԷ

**11** Մի՛ բամբասէք գիրար, եղբայրներ: Ա՛ն որ կը բամբասէ իր եղբայրը կամ կը դատէ իր եղբայրը, կը բամբասէ Օրէ՛նքը եւ կը դատէ Օրէ՛նքը: Իսկ եթէ դատես Օրէ՛նքը, ա՛յ Օրէ՛նքը գործադրող չես, հապա՛ դատաւոր: **12** Միայն մէ՛կ Օրէ՛նդիր (ու Դատաւոր) կայ, որ կարող է փրկել եւ կորսնցնել: Դուն ո՞վ ես՝ որ կը դատես ուրիշը:

ԶԳՈՒՇԱՅՈՒՄ ՊԱՐԾԵՆԱԼԷ

**13** Հիմա գա՛նք ձեզի՝ որ կ'ըսէք. «Այսօր կամ վաղը պիտի երթանք այսինչ քաղաքը, հոն տարի մը պիտի կենանք, առեւտուր պիտի ընենք ու պիտի շահինք»: **14** (Դո՛ւք՝ որ չէք գիտեր թէ ի՛նչ պիտի ըլլայ վաղը: **15** Զանի որ ի՞նչ է ձեր կեանքը. արդարեւ շոգի մըն է, որ քիչ մը ատեն կ'երեւնայ, յետոյ կ'աներեւութանայ:) Փոխարէնը ըսելու էիք. «Եթէ Տէրը կամենայ, պիտի ապրինք եւ պիտի ընենք այս կամ այն բանը»: **16** Բայց հիմա կը պարծենաք ձեր պոռոտախօսութեամբ. այդպիսի ամէն պարծանք չար է: **17** Ուրեմն ո՛վ որ գիտէ բարին ընել՝ բայց չ'ըներ, ատիկա մեղք է իրեն համար:

ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀԱՐՈՒՍՏՆԵՐՈՒՆ

<sup>ա</sup> **Յուն.**՝ հաճոյքներէն

<sup>բ</sup> **Կամ՝** կը խօսի. «Նախանձի՞ կը տենչայ մեր մէջ բնակող Հոգին»

<sup>գ</sup> **Յուն.**՝ մաքրագործեցէ՛ք

5

Հիմա գա՛նք **ձեզի՝** հարուստներ՝. լացե՛ք եւ վայեցե՛ք այն թշուառութիւններուն համար՝ որ պիտի «պատահին ձեզի»: **2** Ձեր հարստութիւնը փտած է, ու ձեր հանդերձները ցեցի կեր եղած են: **3** Ձեր ոսկին եւ արծաթը ժանգոտած են. անոնց ժանգը վկայ պիտի ըլլայ ձեզի դէմ ու կրակի պէս պիտի ուտէ ձեր մարմինը: Գանձ դիզեցիք վերջին օրերուն համար. **4 սակայն** ահա՛ ձեր արտերը քաղող գործաւորներուն վարձքը՝ որմէ զրկեցիք **զանոնք՝** կ'աղաղակէ, եւ հնձուորներուն կանչը հասաւ զօրքերու Տէրոջ ականջներուն: **5** Հեշտանքով ու ցոփութեամբ ապրեցաք երկրի վրայ, կերակրեցիք ձեր սիրտերը՝ որպէս թէ մորթուելու օրուան համար: **6** Դատապարտեցիք, սպաննեցիք արդարը՝ որ չէր ընդդիմանար ձեզի:

ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՂՕԹՔ

**7** Ուրեմն համբերատար եղէք, եղբայրներ, մինչեւ Տէրոջ գալուստը: Ահա՛ մշակը կը սպասէ երկրի պատուական պտուղին՝ համբերատար ըլլալով անոր համար, մինչեւ որ ստանայ առաջին անձրեւն ու վերջին անձրեւը: **8** Դո՛ւք ալ համբերատար եղէք **եւ** ամրացուցէ՛ք ձեր սիրտերը, որովհետեւ Տէրոջ գալուստը կը մօտենայ: **9** Մի՛ հառաչէք իրարու դէմ, եղբայրներ, որպէսզի չդատապարտուիք: Ահա՛ Դատաւորը կայնած է դրան առջեւ: **10** Եղբայրներս, չարչարանքներու եւ համբերատարութեան համար օրինա՛կ առէք մարգարէներէն, որոնք խօսեցան Տէրոջ անունով: **11** Ահա՛ երանելի կը կոչենք տոկացողները: Դուք լսեցի՛ք Յոբի համբերութեան մասին, եւ տեսա՛ք Տէրոջ **անոր շնորհած** վախճանը, որովհետեւ Տէրը բազմագութ է, եւ արգահատող:

**12** Բայց ամէն բանէ առաջ, եղբայրներս, երդում մի՛ ընէք, ո՛չ երկինքի վրայ, ո՛չ երկրի վրայ. ո՛չ ալ ուրիշ որեւէ երդում: Հապա ձեր «այո՛»ն՝ այո՛ ըլլայ, ու «ո՛չ»ը՝ ո՛չ, որպէսզի չիյնաք <sup>բ</sup>դատապարտութեան տակ:

**13** Ձեզմէ մէկը կը չարչարուի՞. թող աղօթէ: Մէկը ոգեւորուա՞ծ է. թող սաղմոս երգէ: **14** Ձեզմէ մէկը հիւա՞նդ է. թող կանչէ եկեղեցիին երէցները, եւ անոնք թող աղօթեն իր վրայ՝ իւղով օծելով զինք Տէրոջ անունով: **15** Հաւատքով եղած աղօթքը պիտի փրկէ հիւանդը, եւ Տէրը ոտքի պիտի հանէ զայն. ու եթէ մեղք ալ գործած է, պիտի ներուի անոր: **16** Խոստովանեցէ՛ք իրարու ձեր յանցանքները, եւ աղօթեցէ՛ք իրարու համար, որպէսզի բժշկուիք: Արդարին ներգործող աղերսանքը շատ ազդեցիկ է: **17** Եղիա կիրքերու ենթակայ մարդ մըն էր՝ մեզի նման: Ան աղօթեց որ անձրեւ չտեղայ, ու երկրի վրայ անձրեւ չտեղաց երեք տարի եւ վեց ամիս: **18** Ապա դարձեալ աղօթեց, ու երկինք անձրեւ տուաւ եւ երկիր ծաղկեցուց իր պտուղը:

**19** Եղբայրներ, եթէ ձեզմէ ոեւէ մէկը մոլորի ճշմարտութենէն, ու մէկը վերադարձնէ զայն, **20** թող գիտնայ թէ ա՛ն՝ որ կը վերադարձնէ մեղաւորը իր մոլորութեան ճամբայէն, կը փրկէ անձ մը մահէն, ու կը ծածկէ մեղքերու բազմութիւն մը:

<sup>ա</sup> **Յուճ.**՝ գան ձեր վրայ  
<sup>բ</sup> **Յուճ.**՝ դատաստանի